ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Դ. Կոստանդյան
«15» 05 2023թ.

ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հայ գրականություն*
ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *«Ընթերցանություն և ատմունք»*

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ *Երիցյան Արշալույս*

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ. նիստում: Արձանագրության թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել
հումանիտար առարկաների

մեթոդմիավորման 12.05.2023թ նիստում: Արձանագրության թիվ 10 :

Մեթոդմիավորման նախագահ ______ *Դանիելյան Մ.*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ ______ *Ավանեսյան Ս.*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով տնօրենի տեղակալ ______ *Գևորգյան Ա.*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2023թ.

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «Ընթերցանություն և ասմունք»

ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝
ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 5-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝
Շաբաթական 1 դասաժամ
Ընդհանուր տևողությունը՝ 34 դասաժամ, որից՝ 4 դասաժամ տեսական
30 դասաժամ գործնական

ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝

«Ընթերցանություն և ասմունք» խմբակը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: «Ընթերցանություն և ասմունք» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը՝ մոտիվացիայից, գեղարվեստական գրականության ընթերցանությունից, գրական երկերի տեսակներից, գրականության բաժիններից, պոեզիայից, արձակից, Չարենցից ու Սևակից կատարի ընթերցումներ, ինչը կնպաստի նաև «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով), հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով), արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը, արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական, վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ, դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ, ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը, ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ, ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:

ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Աշակերտների մոտ ձևավորել ու զարգացնել սերը դեպի ընթերցանությունն ու ասմունքը:

Առաջարկվող ընթերցանության նյութերի միջոցով նպաստել աշակերտների լեզվամտածողության ու ինքնաարտահայտման ոլորտի ձևավորմանը: Հետևողականությամբ և պահանջկոտությամբ ընդլայնել սովորողների ընթերցելու կարողությունները, լեզվական գրագիտությունը, ընթերցանության որակը:

Հայ դասականների լավագույն գոհարների ընթերցանության միջոցով աշակերտների մեջ սերմանել, ինչպես նաև սովորեցնել արժևորել ազգայինը, հայկական վեհ արժեքները: Արձակ և չափածո գրական տեքստերի արտահայտիչ ընթերցման միջոցով նպաստել սովորողների գեղեցիկ և հայեցի մտքերի արտահայտմանը, մեջբերումների կիրառմանը: Զարգացնել մի քանի նախադասության միջոցով իրենց տպավորությունները, զգացածը նկարագրելու ունակությունը: Բնագիրը վարժ, անսխալ ու արտահայտիչ կարդալ, իմանալ ստեղծագործության հիմնական գաղափարը, նկարագրել և ներկայացնել հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները:

ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Տեքստերի բովանդակային վերլուծությունը հիմնաքարը կլինի աշակերտների լսածն ու ընթերցածը հեշտությամբ նկարագրելուն՝ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Աշակերտները կսովորեն բանաստեղծություններ, արձակ հատվածներ, հեքիաթներ, առակներ ընթերցելիս շեշտադրել հիմնական գաղափարը՝ միաժամանակ նշելով, թե ինչ է փոխանցում այդ տեքստն իրենց: Խմբակի շրջանակում կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ այլ դպրոցի երեխաների հետ, ինչը կնպաստի գիտելիքների փոխանակմանը ասմունքի և ընթերցանության ոլորտում: Հանդիպման շրջանակներում երկուստեք կկարողանան հորինել խմբային խոսք և այդ ամենը ամբողջացնելով՝ ստեղծել նյութին համապատասխան պաստառ:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտը պետք է՝

1. Իմանա ինչ է մոտիվացիան, ասմունք բառի նշանակությունը, գեղարվեստական գրականությունը որպես արվեստի տեսակ: Կարողանա նշել, որ գրական երկերը բաժանվում են երկու մեծ խմբի: Տեղեկություն ունենա գրականության երեք մեծ բաժիններից: Իմանա, որ բանաստեղծությունը գեղարվեստական գրականության ձև է: Տեղեկություն ունենա պոեզիայի և արձակի վերաբերյալ:
2. Ծանոթ լինի հուշագրություններին և տեղեկատվական գրականությանը: Իմանա նաև ինչ է սոնետը, քառյակը, հայրենը: Նշի բանաստեղծական կայուն ձևերը և կատարի ընթերցումներ քառյակի ասպարեզում լավագույնս հանդես եկած Հովհաննես Շիրազից:
3. Ինչ է հանգը, հանգավորման տեսակները, քնարական պոեզիան, սպիտակ բանաստեղծությունը: Կատարի ընթերցումներ Եղիշե Չարենցից, Պարույր Սևակից, Հովհաննես Շիրազից, Համո Սահյանից և ստեղծագործողներից:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ինչ է մոտիվացիան, ասմունք բառի նշանակությունը: Գեղարվեստական գրականությունը որպես արվեստի տեսակ: Գրական երկերի խմբերը, գրականության երեք բաժինները: Բանաստեղծությունը որպես գեղարվեստական գրականության ձև: Պոեզիա և արձակ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է՝

- իմանա՝ ինչ է մոտիվացիան
- իմանա ասմունք բառի նշանակությունը
- իմանա արվեստի տեսակները՝ նշելով, որ գրականությունը ևս արվեստի տեսակ է:
- Կարողանա նշել, որ գրական երկերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ արձակ, չափածո:
- Տեղեկություն ունենա գրականության երեք մեծ բաժիններից՝ սեռերից (էպիկական, քնարական և դրամատիկական):
- իմանա, որ բանաստեղծությունը գեղարվեստական գրականության ձև է:
- իմանա՝ ինչ է պոեզիան: Իմանա՝ ինչ է արձակը:
- նշի պոեզիայի և արձակի տարբերությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Գնահատումը կիրականացվի քարտային աշխատանքով: Աշակերտներին կտրվեն համապատասխան հարցեր պարունակող հարցաթերթիկներ, որտեղ նրանց կառաջադրվի պատասխանել հետևյալ հարցերին.

ա. Ի՞նչ եք հասկանում մոտիվացիա ասելով:

բ. Նշել ասմունք բառի հոմանիշ բառեր:

գ. Արվեստի ի՞նչ տեսակներ կան:
դ. Քանի՞ խմբի են բաժանվում գրական երգերը:
ե. Նշել գրականության բաժինները:
զ. Ի՞նչ է պոեզիան և արձակը: Նշել դրանց տարբերությունը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է կատարում վերոնշյալ առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, օգտագործվում է գրատախտակ, գեղարվեստական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, քարտեր, ասմուքին վերաբերող ձայնագրություններ, համակարգիչ, հարցաթերթիկ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 3 դասաժամ
Գործնական՝ 5 դասաժամ

№	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
1.1	Մոտիվացիա և ասմունք	1	1	
1.2	Գեղարվեստական գրականությունը արվեստի տեսակ	1	1	
1.3	Գրական երկերի բաժանումը	1	1	
1.4	Գրականության սեռերը՝ էպիկական, քնարական և դրամատիկական:	1		1
1.5	Բանաստեղծությունը գրական արվեստի ձև	1		1
1.6	Արձակը, որպես լեզվական ձև	1		1
1.7	Չափածո ստեղծագործությունները	1		1
1.8	Ընթերցումներ արձակ և չափածո ստեղծագործություններից	1		1

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հուշագրություններն ու տեղեկատվական գրականությանը: Սոնետ, քառյակ, հայրեն: Բանաստեղծական կայուն ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է՝

- Ծանոթ լինի հուշագրություններին և տեղեկատվական գրականությանը:
- Նշի բանաստեղծական կայուն ձևերը:
- Կատարի ընթերցումներ քառյակի ասպարեզում լավագույնս հանդես եկած Հովհաննես Շիրազից:
- Իմանա՝ ինչ է սոնետը, քառյակը, հայրենը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Աշակերտները կգնահատվեն քարտային աշխատանքի միջոցով՝ ելնելով նրանց ուսումնառության մակարդակից: Քարտում ներառված կլինեն հետևյալ հարցերը.

ա. Ի՞նչ գիտես հուշագրության և տեղեկատվական գրականության մասին:
բ. Նշի՛ր բանաստեղծական կայուն ձևերը:
գ. Ի՞նչ է սոնետը, քառյակը, հայրենը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է կատարում վերոնշյալ առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով, օգտագործվում է գրատախտակ, գեղարվեստական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, աստուքին վերաբերող ձայնագրություններ, քարտեր, համակարգիչ, պաստառ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 1 դասաժամ

Գործնական՝ 4 դասաժամ

№	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
2.1	Հուշագրություն: Բանաստեղծական կայուն ձևեր	1	1	
2.2	Ընթերցումներ հուշագրությունից	1		1
2.3	Ընթերցումներ տեղեկատվական գրականությունից	1		1
2.4	Ընթերցումներ (սոնետ, հայրեն, քառյակ)	2		2

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ինչ է հանգը, հանգավորման տեսակները: Սպիտակ բանաստեղծությունը: Ընթերցումներ Եղիշե Չարենցից, Պարույր Սևակից, Հովհաննես Շիրազից, Համո Սահյանից և ստեղծագործողներից: Քնարական պոեզիա:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է՝

- Իմանա՝ ինչ է հանգը, հանգավորման տեսակները:
- Նշի՝ ինչ է սպիտակ բանաստեղծությունը
- Իմանա, որ քնարական պոեզիան ստեղծվում է զգացմունքայնությամբ և հուզականությամբ:
- Ընթերցումներ կատարի Եղիշե Չարենցից, Պարույր Սևակից, Հովհաննես Շիրազից, Համո Սահյանից, Վահան Տերյանից, Հովհաննես Թումանյանից, Սիլվա Կապուտիկյանից, Ակսել Բակունցից, Նար-Դոսից, Հրանտ Մաթևոսյանից, Ռաֆֆուց, Մուշեղ Գալշոյանից, Մուրացանից, Գևորգ Էմինից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Գնահատել բանավոր և գրավոր հարցման միջոցով: Աշակերտներին կտրվեն հետևյալ հարցերը.

ա. Ի՞նչ է հանգը: Նշի՛ր տեսակները:

բ. Ի՞նչ է սպիտակ բնաստեղծությունը: Բե՛ր օրինակներ:

գ. Ինչպե՞ս է ստեղծվում քնարական պոեզիան:

դ. Կատարել ընթերցումներ սույն արդյունքով սահմանված գրողների ստեղծագորոծություններից:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է կատարում վերոնշյալ առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, օգտագործվում է գրատախտակ, գեղարվեստական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, աստուքին վերաբերող ձայնագրություններ, հարցաթերթիկ, համակարգիչ, և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական՝ 21 դասաժամ

№	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
3.1	Սպիտակ բանաստեղծություն	1		1
3.2	Հանգ	1		1

3.3	Եղիշե Չարենցի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.4	Պարույր Սևակի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.5	Հովհաննես Շիրազի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.6	Համո Սահյանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.7	Վահան Տերյանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.8	Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.9	Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.10	Ակսել Բակունցի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.11	Նար-Դոսի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.12	Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.13	Ռաֆֆու ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.14	Մուշեղ Գալշոյանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.15	Մուրացանի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.16	Գևորգ Էմինի ստեղծագործությունները. ընթերցումներ	1		1
3.17	Մուրացան. «Առաքյալը» վիպակի հետաքրքրական կառուցվածքը: Մեջբերումներ վիպակից	1		1
3.18	Գևորգ Էմին. «Յոթ երգ Հայաստանի մասին»	1		1
3.19	Պարույր Սևակ. «Անտիպ բանաստեղծություններ»: Ընթերցումնե	1		1
3.20	Մուշեղ Գալշոյան. «Դավո. մեջբերումներ պատմվածքի	1		1
3.21	Հետադարձ հայացք անցած նյութերին	1		1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ուայթ Ռ. Վ. (1959), «Մոտիվացիան վերանայվեց», Հոգեբանական ակնարկ, 66, էջ 297-333
- Ստեփան Մալխասեանց, «Հայերեն բացատրական բառարան», Երևան, Հայկական ՍՍՌ հրատ. (1994), էջ 258
- Գնել արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան և Արտաշես Տեր Խաչատուրեան, «Հայոց լեզվի նոր բառարան», Պէյրութ, Կ. Տօնիկեան և Որդիք հրատ (1991), էջ 201
- Դպրոցական բառակազմական բառարան, 2014
- Հայերեն ստուգաբանական բառարան, 2010
- Արդի հայերենի բացատրական բառարան, 1976
- Էդ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, «Գրականագիտական բառարան», էջ 36
- Էդ. Զրբաշյան, «Գրականության տեսություն», Երևան 1980, էջ 328-330
- Գրականագիտական բառարան, Երևան, «Վան Արյան», 2009
- Հայական սովետական հանրագիտարան, հատոր 8, էջ 682
- Նինա Հովսեփյան, Շահանե Պետրոսյան, «Պարույր Սևակը հուշագիրների ափի մեջ», Երևան 2006, էջ 33-353
- Սերգեյ Սարինյան, «Անավարտ և կրճատված հուշեր», էջ 188-198
- Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր 1, Երևան ՀՀՀ 1990, էջ 702
- Մելս Սանթոսյան, «Գրականագիտական բառարան», Երևան, «Վան Արյան», 2009, էջ 48
- Զրբաշյան Էդ., «Գրականության տեսություն», հրատ.5-րդ, Երևան 1980
- Զրբաշյան Էդ., «Գրական ժանրեր, պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Երևան 1973
- Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ., «Գրականագիտական բառարան», Երևան, Լույս հրատ., 1972, էջ 261-263
- Զրբաշյան Էդ, Մախչանյան Հ., «Գրականության տեսություն», Երևան ԵՊՀ, 1980, էջ 308
- Էդոյան Հ., «Հարյուր սոնետ», Երևան 1993
- Զրբաշյան Էդ., «Գրականագիտության ներածություն», Երևան 2011
- Զրբաշյան էդ., «Վահան Տերյանի տաղաչափական համակարգը», Երևան 1995
- Պարույր Սևակ, «Եղիցի լույս» շարք«Ամպոտ եղանակ», 08.19.XII, 1962, Երևան

- Հախվերդեան Լևոն, «Պարույրը իմ յուշերում, իմ նամակներում ու գործերում», 1-ին տպ., Պէյրութ, Ալթափրէս, 1981
- Պարույր Սևակ, «Երկերի ժողովածու», Հայաստան
- Պարույր Սևակ, «Ձեր ծանոթները», «Բանաստեղծություններ» դպրոցական միջին տարիքի համար (հայերեն)
- Պարույր Սևակ, «Իմաստուն մտքերի աշխարհում: Ասույթների ժողովածու», Հայաստան
- Պարույր Սևակ, «Սիրերգություն», 2009
- Եղիշե Չարենց, «Ընտիր երկեր», Երևան 1997, էջ 448
- Եղիշե Չարենց, «Բանաստեղծություններ», Երևան, 1997, էջ 256
- Եղիշե Չարենց, «Ես իմ անուշ Հայաստանի …», Երևան, «Հայաստան» 1970, էջ 32
- Եղիշե Չարենց, «Ամբողխները խելագարված», Երևան «Հայատուն», 1967, էջ 31
- Եղիշե Չարենց, «Կապուտաչյա հայրենիք», Թիֆլիս 1915, էջ 18
- Հովհ. Շիրազ, «Գարնանամուտ», 1935
- Արքմենիկ Նիկողոսյան, «Հովհ. Շիրազի հատընտիրը», էջ 4-196
- Համո Սահյան, «Երկերի ժողովածու», Հայաստան հրատ., 1976
- Համո Սահյան, «Ժայռից մասուր է կաթում», «Բանաստեղծություններ», 1979
- Համո Սահյան, «Տոհմի կանչը», 1981
- Համո Սահյան, «Քարե պատարագ», հատընտիր, Նաիրի
- Համո Սահյան, «Քառյակներ», Ոսկան Երևանցի, 2005
- Համո Սահյան, «Դաղձի ծաղիկ», Բանաստեղծություններ, Ոսկան Երևանցի
- Համո Սահյան, «Ինձ բացակա չդնեք», Զանգակ 97, 2017
- Դավթյան Շչորս Բագրատի: Հ. Սահյան, «Բանաստեղծի հավատամքը», 2004
- Վ. Տերյանը ժամանակակիցների հուշերում, էջ 70
- Հակոբյան Ս., Տերյան Վ., Բեռլին, 1923, էջ 21
- Պարտիզունի Վաչե, «Տերյանի կենսապատումը», էջ 14-17
- Տերյան Վ., «Երկերի ժողովածու» հատոր 4, Երևան 1925, էջ 161
- Հակոբջանյան Հայկազ, «Կյանքս այնպես դժվարին էր», Վ. Տերյան (կենսապատում), Երևան 2011, 390 էջ
- Իշխանյան Ռ., «Տերյանն ինչպես որ կա», «Գիտելիք» 1990
- Թոփչյան Էդ., «Վահան Տերյան», Երևան 1945, 47 էջ
- Տերտերյան Արսեն, Թումանյան Հովհ., «Հայրենի եզերքի քնարերգություն», Վաղարշապատ, 1911, 84 էջ
- Մանուկյան Սարգիս, Հովհ. Թումանյանի «Անուշը» (բանաստեղծական և գեղարվեստական վերլուծություն), Երևան 1931, 52 էջ
- Թումանյան Նվարդ, «Հովհ. Թումանյանի մանկությունն ու պատանեկությունը», Երևան 1938, 65 էջ
- Թումանյան Նվարդ, «Հուշեր և զրույցներ», Երևան «Լույս» 1969, 335 էջ
- Այվազյան Հովհաննես, «Զորավար Անդրանիկ և Հովհ. Թումանյան», Երևան 2004
- Արսիտակեսյան Ալբերտ, «Սիլվա Կապուտիկյան», Երևան, 200 էջ
- Համբարձումյան Վ., Խուդավերդյան Կ., «Սիլվա Կոպուտիկյանը հայկական հանրագիտարանում», հատոր 5, 1974, էջ 268
- Գրական տեղեկատու, Երևան, 1981, 544 էջ, էջ 190
- Սահակյան Վ., Ներսիսյան Ռ., «Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին», Երևան 2005, էջ 99
- «Հայկական հանրագիտարան», 2015, 11.01
- Աղաբաբյան Սուրեն, «Ակսել Բակունց», Երևան 1959, 252 էջ
- Աղաբաբյան Սուրեն, «Ակսել Բակունց», Երևան, ՀՍՍՀ, 1963, 504 էջ
- «Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում», Նինա Հովսեփանյան խմբ, Երևան 1999
- Բակունցի ստեղծագործությունը, Հոդվածների ժողովածու, 1959
- Վանանդեցի Գուրգեն, «Ռաֆֆու վեպերը», Երևան 1928, 136 էջ
- Սարյան Ս., «Ռաֆֆի», Երևան 1957
- Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան 1986
- Հայ նոր գրականության պատմություն, հատոր 3, Երևան 1964, էջ 327-420

- Ռաֆֆի, «ԵՐկերի ժողովածու», հատոր 3, Երևան 1962, էջ 512
- Հայ գրականության պատմություն,գիրք երկրորդ, Երևան 1950, էջ 86-88
- Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան 1983, էջ 345
- Գրիգորյան Վաչագան, «Մուշեղ Գալշոյան ստեղծագործությունը», Երևան 1998,149 էջ
- Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր 1, 1990
- Համբարձումյան Վ., Խուդավերդյան Կ., «Հայկական սովետական հանրագիտարան», հատոր 2, 1974, էջ 657
- Հայ նոր գրականության պատմություն, հատոր 4, Երևան 1972, էջ 124-182
- Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան 1982
- Պարտիզունի Վաչե, «Մուրացան,կյանքն ու ստեղծագործությունը», Երևան 1956, 560 էջ
- Մուրացան, «Երկեր», «Լույս» հրատ., 1980
- Գևորգ Էմին, «Կենսամատենագրություն», Երևան 1982
- Դեմիրճյան Դերենիկ, Գ Էմինի «Նոր ճանապարհ» գիրքը, երկ. Ժողովածու, հատոր 12, Երևան 1983, էջ 59-65
- Պարույր Սևակ, «Այն տարիքում, երբ…», Երկերի ժողովածու, հատոր 5, Երևան 1974, էջ 206-226
- Ստեփան Զորյան, Գևորգ Էմին «Նախաշավիղ», երկերի ժողովածու, հատոր 12, Երևան 1990, էջ 163-165
- Հայ նոր գրականության պատմություն, հատոր 4, Երևան 1972, էջ 251-295
- Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր 3, Երևան 1999, էջ 859
- Տերտերյան Արսեն, «Նար-դոսի ստեղծագործությունը», գրական քննադատական ուսումնասիրություն, Թիֆլիս 1913, 75 էջ
- Գրիգորյան Վ., «Հրանտ Մաթևոսյան», Երևան 1989
- Մաթևոսյանական արձագանքներ, Վանաձոր, 2005
- Մաթևոսյանական ընթերցումներ,գիրք 2, Երևան 2011
- Գրիգորյան Վ. Ռ., «Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը» Երևան 2013, 560 էջ
- Հրանտ Մաթևոսյան, «Մեր վազքը», Երևան 1978, էջ 3